«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ 6

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 6

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ 7

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ 8

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ 9

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ 10

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ 11

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ 15

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ 16

ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ 18

ԲԱԺԻՆ 14. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 20

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՈՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 21

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 21

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 22

ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 23

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ» 24

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով սահմանված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել, ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5. Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, և տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական ինտերնետային կայքում:

1.6. Կանոնների համաձայն Ապահովագրողը, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, Ապահովադիրների հետ կնքում է դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության Պայմանագիր:

1.7. Կանոնների համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) Կանոններով սահմանված կարգով հատուցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն ամբողջությամբ կամ նրա մի մասը՝ կախված պատճառված վնասի չափից և Պայմանագրի պայմաններից:

1.8. Կանոններով Ապահովադիր կարող է հանդիսանալ՝

1.8.1. գործունակ ֆիզիկական անձը,

1.8.2. իրավաբանական անձը,

1.8.3. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը,

1.8.4. միջազգային կազմակերպությունը,

1.8.5. դեսպանատունը, հյուպատոսարանը:

1.9. Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Ապահովադիր հանդիսացող ֆիզիկական անձի օգտին, այնպես էլ այլ ֆիզիկական անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձ կամ Շահառու):

1.10. Ապահովագրված անձ կարող է հանդիսանալ 70 տարեկանը չլրացած ֆիզիկական անձը:

1.11. Մեկ Պայմանագրով կարող են ապահովագրվել մեկից ավելի ֆիզիկական անձինք՝ ֆիզիկական անձանց խումբ:

1.12. Կանոնների հիման վրա դժբախտ պատահարներից կարող են ապահովագրվել նաև Ավտոտրանսպորտային միջոցների վարորդները և ուղևորները: Եթե Կանոնների հիման վրա դժբախտ պատահարներից ապահովագրվում են ուղևորներ, ապա ապահովագրված են համարվում Ապահովադրի կողմից շահագործվող Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում փոխադրվող ուղևորները (ապահովագրված անձ): Այդպիսի Պայմանագրում պարտադիր նշվում են Ապահովադրի կողմից շահագործվող այն Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) տվյալները (համապատասխանաբար դրանց վարորդների տվյալներով), որոնցով փոխադրվող ուղևորները համարվում են ապահովագրված Պայմանագրի գործողության ժամանակահատվածում: Եթե Պայմանագրով ապահովագրվում են որոշակի երթուղով և օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված փոխադրող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների ուղևորները, ապա Պայմանագրում պարտադիր նշվում է տեղեկատվություն փոխադրման երթուղու վերաբերյալ: Օրենսդրության համաձայն չլիցենզավորված կամ չթույլատրված կամ օրենսդրությամբ սահմանված կարգով չշահագործվող ավտոբուսների, միկրոավտոբուսների ուղևորների գծով կնքված Պայմանագիրն առոչինչ է:

1.13. Վարորդի և ուղևորների՝ դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի պարագայում Շահառու է հանդիսանում այն ապահովագրված անձը, որի հետ տեղի է ունեցել տվյալ ապահովագրական պատահարը: Ապահովագրված անձի մահվան դեպքում որպես Շահառու հանդես են գալիս Ապահովագրված անձի իրավահաջորդները:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2"1" Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

2"2" Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

2.2.1" **Ապահովագրող**՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ,

2.2.2" **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, միջազգային կազմակերպություն, դեսպանատուն, հյուպատոսարան,

2.2.3" **Ապահովագրված անձ՝** Պայմանագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ տեղի ունեցած պատահարը կարող է դիտարկվել որպես պայմանագրի առարկա, և որի տարիքը Պայմանագրի կնքման պահին կազմում է 0 (զրո)-ից 70 (յոթանասուն) տարեկան (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով): Պայմանագրի կնքման պահին հոգեկան հիվանդություններ, էպիլեպսիա, նյարդային համակարգի այլ ծանր խանգարումներ, օնկոլոգիական հիվանդություններ, բնածին անոմալիաներ և հաշմանդամություն, իրավասու պետական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման գծով տրված որոշմամբ հաստատված՝ անձի ֆունկցիոնալության սահմանափակման միավոր ունեցող անձը կարող է

հանդիսանալ Ապահովագրված անձ միայն այն պայմանով, որ մինչև Պայմանագրի կնքումը Ապահովադիրը գրավոր ձևով տեղեկացրել է այդ մասին Ապահովագրողին: Հակառակ դեպքում վերոնշյալ փաստերից որևէ մեկը Ապահովագրողին ի հայտ գալու դեպքում տվյալ անձը չի համարվում Պայմանագրի շրջանակներում ապահովագրված,

2.2.4" **Շահառու՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ,

2.2.5" **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ,

2.2.6" **Ապահովագրական սակագին՝** սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

2.2.7" **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

2.2.8" **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

2.2.9" **Ավտոտրանսպորտային միջոց՝** ճանապարհներով մարդկանց, բեռները կամ դրանց ամրակցված սարքավորումները փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար նախատեսված մեքենաներ, որոնք գործարկվում են շարժիչով, և որոնց աշխատանքային ծավալը գերազանցում է 50 սմ^3-ը, կամ որոնց առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը: Ավտոտրանսպորտային միջոցները ներառում են մարդատար, բեռնատար, բեռնամարդատար ավտոմեքենաները, ավտոբուսները, մոտոցիկլետները, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ՝ այլ ինքնագնաց մեքենաները, այդ թվում՝ գյուղատնտեսական և քարշակային տեխնիկա, օժանդակ և գյուղատնտեսական այլ մեխանիզմներ,

2.2.10" **Ուղևոր՝** անձ, ով չի հանդիսանում վարորդ կամ վարել սովորեցնող անձ և գտնվում է Ավտոտրանսպորտային միջոցի սրահում (խցիկում),

2.2.11" **Դժբախտ պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր և (կամ) մշտական կորուստ և (կամ) մահ,

2.2.12" **Աշխատունակության ժամանակավոր կորուստ՝** Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները: Ընդ որում, նշված վիճակը պետք է հաստատված լինի անաշխատունակության թերթիկով, իսկ այն անձանց գծով, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթակա չէ տրամադրման անաշխատունակության թերթիկ՝ ստացիոնար քարտից քաղվածքով (էպիկրիզ)ով և (կամ) ամբուլատոր քարտից քաղվածքով,

2.2.13" **Աշխատունակության մշտական կորուստ՝** Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա կարիք ունի մշտական խնամքի (օգնության կամ հսկողության)

կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում և իրավասու պետական մարմնի կողմից ստացել է անձի ֆունկցիոնալության գնահատման գծով տրված որոշմամբ հաստատված՝ անձի ֆունկցիոնալության սահմանափակման միավոր: Աշխատունակության մշտական կորուստ է համարվում նաև Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակը, որի պայմաններում անձն այլևս չի կարող կատարել մասնագիտական աշխատանք (մասնագիտական աշխատունակության կորուստ),

2.2.14" **Չհատուցվող գումար՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1" Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովագրված անձի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս հասցնելու հետ:

3.2" Կանոնների համաձայն կնքված Պայմանագրում ապահովագրության տարածք է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքը և համապատասխանաբար Ապահովագրողը ապահովագրության տարածքի սահմաններից դուրս Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած պատահարի արդյունքում առաջացած վնասների համար պատասխանատվություն չի կրում:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1" Կանոնների համաձայն՝ ապահովագրական ռիսկ (ապահովագրական պատահար) է համարվում Դժբախտ պատահարը, որի հետևանքով Ապահովագրված անձի մոտ արձանագրվել է՝

4"1"1" աշխատունակության ժամանակավոր կորուստ, և/կամ

4"1"2" աշխատունակության մշտական կորուստ, և/կամ

4"1"3" մահ:

4.2" Ապահովադրի ցանկությամբ ապահովագրությունը Պայմանագրով կարող է իրականացվել Կանոններով նախատեսված բոլոր պատահարներից (համալիր ապահովագրություն), ինչպես նաև այդ պատահարներից մեկի կամ երկուսի գծով, բացառությամբ Կանոնների 4.3 կետով սահմանված դեպքերի:

4.3" Ավտոտրանսպորտային միջոցի վարորդը և ուղևորները կարող են ապահովագրվել միայն դժբախտ պատահարներից համալիր ապահովագրության դեպքում:

4.4" Որպես ապահովագրական պատահարներ (ռիսկեր) Կանոնների 4.1.1, 4.1.2, և 4.1.3 ենթակետերով նախատեսված դեպքերը միաժամանակ ներառող ապահովագրությունն անվանվում է «Դժբախտ պատահարներից ռիսկերի համալիր ապահովագրություն» (այս անվանումը որպես ապահովագրական պատահար (ռիսկ) նշվում է Պայմանագրում՝

Կանոնների 4.1.1, 4.1.2, և 4.1.3 ենթակետերով նշված ռիսկերից միաժամանակ ապահովագրության դեպքում): Ընդ որում, մեկ պատահարի արդյունքում մի քանի ռիսկերի առաջացման դեպքում հատուցումն իրականացվում է առավելագույն հատուցման չափ նախատեսող միայն մեկ ռիսկի գծով:

4.5" Ապահովագրական պատահար է համարվում նաև Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով Կանոնների 4.1 կետով նախատեսված վիճակներից որևէ մեկի/ավելի մեծ հատուցման չափ նախատեսող վիճակի առաջացումը Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան նշված դժբախտ պատահարի օրվան հաջորդող 6 (վեց) ամսվա ընթացքում: Սույն կետով նշված պատահարը չի դիտվում որպես առանձին պատահար, և հատուցումն իրականացվում է առավելագույն հատուցման չափ նախատեսող միայն մեկ ռիսկի գծով:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ

5"1" Ապահովագրական պատահարներ չեն համարվում՝

5.1.1" տրավմատիկ վնասվածքները և մահը, որոնց/ պատճառ է հանդիսացել Ապահովագրված անձի որևէ հիվանդությունը,

5.1.2" տրավմատիկ վնասվածքները և մահը, որոնք հետևանք են սրտի կաթվածի, ուղեղի արյան շրջանառության խանգարման, ցանկացած հիվանդության արդյունքում ի հայտ եկած ուշաթափությունների,

5.1.3" տրավմատիկ վնասվածքները կամ մահը, որոնք առաջացել են նյարդային խանգարումների արդյունքում,

5.1.4" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կամ Շահառուի հակաօրինական գործողությունների արդյունքում,

5.1.5" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կամ Շահառուի կողմից միտումնավոր գործողությունների արդյունքում,

5.1.6" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի՝ ալկոհոլի, թմրանյութերի կամ թունավոր/հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվելու հետևանքով,

5.1.7" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել տվյալ տրանսպորտային միջոցը վարելու իրավունք չունեցող ապահովագրված անձի կողմից՝ այդ տրանսպորտային միջոցը վարելու հետևանքով,

5.1.8" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հետևանքով,

5.1.9" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կողմից ինքն իրեն միտումնավոր մարմնական վնասվածք հասցնելու հետևանքով,

5.1.10" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կողմից քաղաքացիական անկարգություններին, պատերազմներին կամ ռազմական այլ գործողություններին անմիջական մասնակցություն ունենալու հետևանքով եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

5.1.11" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Դժբախտ պատահարի հետևանքով առողջական խնդիրները չբուժելու, բժշկի խորհրդին չհետևելու կամ ոչ

ամբողջությամբ հետևելու, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրները բարդացման, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացումը,

5.1.12" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելու (բացառությամբ ուրիշի կյանքը փրկելու) հետևանքով,

5.1.13" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի օդային ճանապարհորդության հետևանքով՝ բացառությամբ այն դեպքի, երբ նա հանդիսանում է լիցենզավորված բազմաշարժիչային՝ առևտրային ինքնաթիռի ուղևոր, որը ղեկավարվում է արտոնագրված առևտրային ավիաընկերության կողմից՝ կամ պատկանում և ղեկավարվում է առևտրային ընկերության կողմից,

5.1.14" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կողմից պրոֆեսիոնալ սպորտով զբաղվելու, ցանկացած տեսակի սպորտով կանոնավոր զբաղվելու, մրցումներին կամ մրցավազքերին մասնակցելու արդյունքում: Սույն կետում նշված սպորտաձևերով զբաղվելը կարող է դիտվել որպես ապահովագրական պատահար, եթե դա տեղի է ունեցել միանգամյա մարզման, խաղերի ժամանակ (օրինակ՝ արձակուրդի ոչ աշխատանքային օրերի ընթացքում), որոնք հնարավոր չէ դիտարկել որպես պրոֆեսիոնալ սպորտով զբաղվել կամ կանոնավոր մարզումներ՝ ուղղված մարզական արդյունքների ձեռքբերմանը,

5.1.15" վնասվածքները կամ մահը, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի կողմից կյանքի, առողջության համար վտանգավոր հոբբիներով (օրինակ՝ լեռնամագլցում, սառցամագլցում լեռնագնացություն, ջրասուզություն, անկարգելով թռչսքայսերֆինգ, դելտապարապլանեռիզմ, մարտեր առանց կանոնների, որսորդություն, ավտո- կամ մոտո-մրցաշարներ և այլն) զբաղվելու արդյունքում,

5.1.16" վնասվածքները կամ մահը որոնք ի հայտ են եկել հղիության կամ դրա ընդհատման արդյունքում հոգեկան կամ նյարդային խանգարումների պատճառով:

5"2" Կանոնների 5.1 ենթակետում նշված դեպքերը որպես այդպիսին ճանաչվում են այդ արարքները հավաստող՝ իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերով/կայացված ակտերով:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1" Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6.2" Ապահովադիրը կարող է հանդես գալ Ապահովագրական գումարը մեծացնելու պահանջով՝ վճարելով համապատասխան չափով Ապահովագրավճար:

6.3" Պայմանագրով Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել ինչպես Ապահովագրված անձի համար ընդհանուր գումարի տեսքով, այնպես էլ առանձին տեսակի վնասվածքների համար առանձին-առանձին:

6.4" Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն շեմ մեկ ապահովագրական պատահարի համար:

6.5" Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

6.6" Ապահովագրական գումարը նվազում է իրականացված ապահովագրական հատուցման չափով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

7.1" Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

7.2" Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.3" Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից Պայմանագրի համաձայն կարող է վճարվել միանվագ (միանգամյա մուծումով) ապահովագրության ողջ ժամկետի համար կամ մաս-մաս՝ համաձայն Պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

7.4" Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել անկանխիկ՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.5" Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.6" Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար կարող է սահմանել լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր կամ բանավոր ծանուցելով Ապահովադրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

7.7" Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Այս դեպքում Ապահովադրի կողմից նախապես Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

7.8" Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված Ապահովագրավճարի չափը կամ ընդհանրապես հրաժարվել վճարել ապահովագրական հատուցումը բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

7.9" Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Ապահովագրության Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով

նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

7.10" Ապահովագրողը, հաշվի առնելով իրեն հայտնի դարձած ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների առկայությունը, կարող է Ապահովադրից (Շահառուից) պահանջել Պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար:

7.11" Եթե Ապահովադիրը (Շահառուն) դեմ է Պայմանագրի պայմաններում փոփոխություններ մտցնելուն կամ լրացուցիչ ապահովագրավճար մուծելուն, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծելու Պայմանագիրը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7.12" Ապահովադրի (Շահառուի) կողմից Կանոնների 7.11 կետով նախատեսված պարտավորության չկատարման դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և իրավական ակտերով սահմանված կարգով պահանջել Պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցում:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

8.1" Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև սահմանված ձևով ձեռք բերված համաձայնություն է, ըստ որի՝ Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Ապահովադրին (Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2" Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի, ներառյալ՝ համապատասխան էլեկտրոնային միջավայրում կատարված հարցման հիման վրա: Ընդ որում, Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ (ներառյալ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ) մեկ փաստաթուղթ կազմելու, այնպես էլ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

8.2.1" փոստային, հեռագրային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.2" Ընկերության կողմից համապատասխան տեխնիկական հնարավորություններ ներդրված լինելու դեպքում՝ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով: Սույն կետով նշված եղանակով պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Վկայագրի՝ էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ Պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ

չպաշտպանված Վկայագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը,

8.2.3" օրենքով չարգելված այլ եղանակներով:

8.3" Պայմանագիրը կնքված է համարվում հօգուտ Ապահովագրված անձի (Շահառուի), եթե Պայմանագրում այլ անձ նշված չէ որպես Շահառու: Առանց Ապահովագրված անձի գրավոր համաձայնության՝ Ապահովագրված անձ չհանդիսացող Ապահովադիրը կամ երրորդ անձն ամեն դեպքում Շահառու լինել չի կարող (բացառությամբ Ավտոտրանսպորտային միջոցի Ուղևորների Դժբախտ դեպքերից ապահովագրության դեպքի):

8.4" Պայմանագրի կնքման համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել՝

8.4"1" ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,

8.4"2" իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

8.4"3" Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,

8.4"4" իրեն տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,

8.4"5" այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

8.5" Պայմանագիրը կարող է կնքվել ցանկացած ժամկետով կամ որոշակի աշխատանքների, միջոցառումների անցկացման, ուղևորության, ուղևորների փոխադրման կամ այլ գործողությունների կատարման ժամանակաշրջանի համար: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որի մասին նշում է կատարվում Պայմանագրում: Եթե Պայմանագրում այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

8.6" Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն սույն գլխով նախատեսված կարգով կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.7" Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի համաձայն տալիս է կրկնօրինակ, որից հետո կորցրած օրինակը համարվում է անվավեր: Ապահովագրողը կարող է Ապահովադրից գանձել Պայմանագրի կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար կատարված ծախսերի գումարը:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ

9.1" Պայմանագրի գործողությունը դադարում է՝

9.1"1" Պայմանագրի կողմերի համաձայնությամբ,

9.1"2" Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո,

9.1"3" Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն իր պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց հետո,

9.1"4" Ապահովագրված անձի մահվան դեպքում,

9.1"5" իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի մահվան դեպքում, երբ Ապահովագրված անձը կամ երրորդ անձը (շահառուն) իր վրա չի վերցրել Ապահովադրի կողմից ապահովագրավճարների մուծման և այլ պարտավորությունները,

9.1"6" օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում, եթե տվյալ ապահովագրական ռիսկը, ապահովադրի համաձայնությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի փոխանցվում այլ ապահովագրական ընկերության,

9.1"7" եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,

9.1"8" օրենքով, իրավական ակտերով և Կանոններով նախատեսված այլ դեպքերում:

9.2" Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Ապահովագրողին չի ազատում Պայմանագրի գործողության ժամանակահատվածում տեղի ունեցած ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների պարտավորությունից:

9.3" Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան տասնհինգ օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

9.4" Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

9.5" Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

9.6" Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար բացառությամբ այն դեպքերի երբ ապահովագրական հատուցումը մերժվել է:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1" **Ապահովադիրն իրավունք ունի՝**

10.1"1" ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

10.1"2" Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Պայմանների և Պայմանագրի կետերի վերաբերյալ,

10.1"3" ստանալ Պայմանները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը,

10.1"4" պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում՝ Պայմանագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

10.1"5" սույն Կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

10.1"6" ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարինել Պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին, սակայն Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար, կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը,

10.2" **Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը և/կամ Շահառուն պարտավոր է՝**

10.2.1" Պայմանագրի կնքման պահին Ապահովադրին գրավոր ձևով տեղեկացնել Ապահովագրված անձի մոտ հոգեկան հիվանդությունների, էպիլեպսիայի, նյարդային համակարգի այլ ծանր խանգարումների, օնկոլոգիական հիվանդությունների, բնածին անոմալիաների և հաշմանդամության առկայության մասին,

10.2.2" Ապահովագրողի պահանջով վերջինիս գրավոր հաղորդել ապահովագրական ռիսկի աստիճանը որոշող հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները (Ապահովագրված անձի մասնագիտական գործունեության կամ զբաղմունքի ցանկացած փոփոխություն, պարտադիր զինվորական ծառայության անցնելը և այլն,

10.2.3" Ապահովագրողին հայտնել այլ ապահովագրության պայմանագրով նույն վնասը ապահովագրված առկա այլ ապահովագրության պայմանագրերի մասին,

10.2.4" Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետ(ներ)ում վճարել Ապահովագրավճարը,

10.2.5" պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով պատահարի մասին հայտնել Ապահովագրողին,

10.2.6" Կանոնների մասին տեղեկացնել Ապահովագրված անձին և Շահառուին,

10.2.7" անցնել բժշկական քննություն և (կամ) զննում (այդ թվում՝ կրկնակի) Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում՝ Ապահովագրողի պահանջով և նրա հաշվին,

10.2.8" ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

10.2.9" կատարել ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

10.3" **Ապահովագրողն իրավունք ունի՝**

10"3.1" ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների կատարումը,

10"3.2" Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,

10"3.3" հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,

10"3.4" ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որի պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,

10"3.5" ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի գումարի հետ,

10"3.6" պահանջել Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի չափի փոփոխություն, Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,

10"3.7" ծանոթանալ Ապահովագրված անձի բժշկական և այլ փաստաթղթերին, որտեղ արտացոլված են դժբախտ պատահարի պատճառները, Ապահովագրված անձի ֆիզիկական ու հոգեկան վիճակը, ախտորոշումը, բուժման ընթացքը և դրա արդյունքների կանխատեսումը, ինչպես նաև նշված տեղեկատվությունն օգտագործել Պայմանագրի հետագա սպասարկման, Ապահովագրական հատուցման տրամադրման (մերժման) վերաբերյալ որոշման կայացման համար: Դժբախտ պատահարի և դրա հետևանքների միջև պատճառահետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով իր հաշվին նշանակել Ապահովագրված անձի կրկնակի բժշկական քննություն և (կամ) զննում,

10"3.8" իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4" **Ապահովագրողը պարտավոր է՝**

10"4.1" Ապահովադրին ծանոթացնել Կանոններին և տրամադրել օրինակը,

10"4.2" Ապահովադրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10"4.3" Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին որոշում:

10.5" Ապահովադիրը, Ապահովագրողը, Ապահովագրված անձը և Շահառուն պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

10.6" Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

11"1" Ապահովագրողն իրավասու է ՀՀ գործող օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով նախատեսված բոլոր ծանուցումները (որոշումներ, փաստաթղթերը և այլ նյութեր) Կանոններով և Պայմանագրով նախատեսված անձանց հանձնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

11"1"1" առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ,

11"1"2" Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի)՝ Պայմանագրում նշված հասցեով պատվիրված նամակով ուղարկելու միջոցով,

11"1"3" իր էլեկտրոնային փոստի հասցեից Ապահովադրի՝ Պայմանագրում նշված կամ Ապահովագրողին գրավոր ձևով տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով,

11"1"4" տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու միջոցով՝ անձի համաձայնության առկայության դեպքում:

11"2" Ապահովադիրը (Շահառուն) Կանոններով և Պայմանագրով ներկայացման ենթակա դիմումները (այդ թվում՝ հայտային դիմում), ծանուցումները, փաստաթղթերը և այլ նյութերը Ապահովագրողին կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով՝

11"2"1" այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ ուղարկվում է Ապահովագրողի պաշտոնական փոստային հասցեին,

11"2"2" այն դեպքում, երբ նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ Ապահովագրողի գրասենյակում, կամ Ապահովագրողի համաձայնությամբ, ուղարկվում է Ապահովագրողի էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) Ապահովագրողի հեռախոսահամարին կամ մուտքագրվում է տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում:

11"3" Սույն գլխում նշված որևէ եղանակով կատարված բոլոր ծանուցումները, ներկայացված դիմումները, փաստաթղթերը և այլ նյութերը համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովադրի (Շահառուի) կողմից, և

վերջիններ կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել.

11"3"1" ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

11"3"2" պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ նամակի ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձման պահին հաջորդող օրվանից,

11"3"3" էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) ուղարկվելու դեպքում՝ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,

11"3"4" տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու դեպքում՝ մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ

12.1" Ապահովադիրը (Ապահովագրված անձը), այն պահից սկսած, երբ իրեն հայտնի է դարձել Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, պարտավոր է անհապաղ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով վկայագրի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով) և պատասխանել Ապահովագրողի հեռախոսային հարցադրումներին՝

12.1"1" Պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի մահվան դեպքում՝ պատահարի պահից 30 օրվա ընթացքում,

12.1"2" Պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի առողջությանը վնաս պատճառված լինելու դեպքում՝ պատահարի պահից 3 օրվա ընթացքում, պայմանով, որ տվյալ պատահարի հետևանքով առողջությանը վնաս պատճառված անձը պատահարից պահից 3 ժամվա ընթացքում տվյալ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների հետ կապված դիմել է (ինքնուրույնաբար կամ նրան տեղափոխել են) բժշկական հաստատություն: Ընդ որում՝ այն դեպքում, երբ պատահարի արդյունքում առաջացել են սույն ենթակետի միաժամանակ 12.1.1 և սույն պարբերություններում նշված հետևանքները, ապա պատահարի մասին տեղեկացման մասով կիրառելի է սույն ենթակետի 12.1.1 պարբերությամբ սահմանված ժամկետը,

12.1"3" Սույն ենթակետի 12.1.1 և 12.1.2 պարբերություններով չնախատեսված դեպքերում՝ պատահարի պահից 24 ժամվա ընթացքում,

12.2" Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապահովագրական պատահարից հետո եռամսյա ժամկետում պետք է Ապահովագրողին ներկայացնի սահմանված ձևով գրավոր դիմում՝ նշելով Ապահովագրված անձի անունը, ազգանունը, հայրանունը և պատահարի տեղի ունենալու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.3" Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացման ենթակա փաստաթղթերն են՝

12.4" Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում՝

12"4"1" Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից դիմում հատուցում ստանալու վերաբերյալ, անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

12"4"2" ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

12"4"3" անաշխատունակության թերթիկ բուժհիմնարկից, որտեղ անց է կացվել բուժումը և ամբուլատոր կամ ստացիոնար քարտից քաղվածք (էպիկրիզ) և (կամ) ամբուլատոր քարտից քաղվածք՝ ցուցաբերված բուժօգնության վերաբերյալ,

12"4"4" դեպքն արձանագրած լիազոր պետական մարմնի եզրակացություն, արձանագրություն, որոշում, դատավճիռ և/կամ վճիռ, իսկ եթե սույն ենթակետով սահմանված փաստաթղթերում դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքների վերաբերյալ վկայակոչում առկա չէ, նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

12.5" Ապահովագրված անձի մշտական աշխատունակության, կորստի դեպքում պետք է ներկայացվեն Կանոնների 12.4 կետի 12.4.1-ից 12.4.5 ենթակետերում նշված փաստաթղթերը և իրավասու պետական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման գծով տրված որոշման կամ հաշմանդամության վերաբերյալ բժշկասոցիալական փորձաքննության բնօրինակը, ընդ որում ներկայացվող փաստաթղթ(եր)ում պետք է հստակ ամրագրված լինի այն ախտորոշումը, համաձայն որի տրվել է հաշմանդամությունը:

12.6" Ապահովագրված անձի մահվան դեպքում՝

12.6"1" իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճենները,

12.6"2" Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը,

12.6"3" դեպքն արձանագրած լիազոր պետական մարմնի եզրակացություն, արձանագրություն, որոշում, դատավճիռ և/կամ վճիռ, իսկ եթե սույն ենթակետով սահմանված փաստաթղթերում դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքների վերաբերյալ վկայակոչում առկա չէ, նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

12.7" Եթե հատուցման իրականացման (վնասի գնահատման) համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրված անձից պահանջել բժշկական փորձաքննության անցկացում, որը անց է կացվում Ապահովագրողի հաշվին: Սույն կետով նշված պահանջի առկայության դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է մասնակցել համապատասխան բժշկական փորձաքննության անցկացմանը:

12.8" Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումին կից չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա Ապահովագրողը պարտավոր է դիմումի ստացման օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում Ապահովադրին (Շահառուին) տրամադրել վերջինի կողմից ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը: Սույն կետով նախատեսված պակաս փաստաթղթերը պետք է Ապահովագրողին ներկայացվեն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

12.9" Դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում

համապատասխան ժամկետները կետանցած անձը զրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և (կամ) կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը Կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել Ապահովագրողի կողմից:

12.10" Սույն Կանոններով ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետները բաց թողած անձն ապացուցում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության փաստը՝

12.10.1" ժամկետի բացթողման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը, որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը՝ ներառյալ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և (կամ) ուժի մեջ մտած չլինելու պատճառով,

12.10.2" անձը դիմումը կամ պատասխանը ներկայացրել է կամ տեղեկացման պարտավորությունը կատարել է Կանոնների 12.10.1 ենթակետով նախատեսված հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար սույն կանոններով սահմանված ժամկետում:

12.11" Փաստաթղթերի ներկայացման ժամկետի բացթողումը Ապահովագրողի կողմից կարող է հարգելի ճանաչվել այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված դեպքերում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է փաստաթղթերի ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով:

ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

13"1" Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է:

13"2" Ապահովագրական հատուցման ժամանակ առաջնահերթությունը տրվում է պարտադիր ապահովագրության տեսակներին:

13"3" Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է հետևյալ չափերով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով)՝

13.3"1" Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում՝ բուժման յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրական գումարի 0,4%-ի չափով, բայց ոչ ավել քան 90 օր,

13.3"2" հաշմանդամության դեպքում իրավասու պետական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման գծով տրված որոշմամբ հաստատված՝ անձի ֆունկցիոնալության սահմանափակման միավորին համապատասխան,

13.3"3" այն վնասվածքների դեպքում, որոնց համար դժբախտ պատահարից հետո վեցամսյա ժամկետում պաշտոնապես չի արձանագրվում աշխատունակության մշտական

կորուստ, ապահովագրական հատուցում վճարվում է միայն Հավելված 1-ով սահմանված վիճակների առկայության/վնասվածքների բնույթին համապատասխանության դեպքում՝ Հավելված 1-ով սահմանված համապատասխան չափերով:

13"4" Եթե Ապահովագրված անձի հետ մեկ Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Կանոնների 4.1.1 ենթակետով սահմանված դեպքին հաջորդել է տվյալ առողջական խնդրի հետևանքով իրավասու պետական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալության գնահատման գծով տրված որոշմամբ հաստատված՝ անձի ֆունկցիոնալության սահմանափակման միավոր ստանալը կամ արդեն առկա միավորի փոփոխությունը, ապա հատուցում իրականացնելիս ապահովագրական հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցման գումարները (վճարվում է դրական տարբերությունը):

13"5" Եթե Ապահովագրված անձի հետ մեկ Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Կանոնների 4.1.1 և (կամ) 4.1.2 ենթակետերով սահմանված դեպքերին հաջորդել է Ապահովագրված անձի մահը, ապա վերջինի համար իրականացվող հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցման գումարներ (վճարվում է դրական տարբերությունը):

13"6" Այն դեպքում, երբ Պայմանագրով, Ապահովադիրն ապահովագրավճարի վճարումները կատարում է փուլային կարգով (տարաժամկետ վճարման եղանակով), ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման գումարից պահվում են Ապահովադրի կողմից չմուծված ապահովագրավճարները, որից հետո Ապահովադիրը համապատասխան չափով ազատվում է ապահովագրավճարի հետագա մուծումներից:

13"7" Ապահովագրողն Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Ապահովադրին, Ապահովագրված անձին, Շահառուին, կամ Շահառուի ժառանգներին:

13"8" Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:

13"9" Հատուցման վճարումը կատարվում է գումարի փոխանցումով ստացողի բանկային հաշվին: Բանկային հաշիվը կարող է նշվել ինչպես ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին ներկայացված դիմումի մեջ, այնպես էլ ներկայացվել առանձին դիմումով:

13"10" Հատուցման վճարման կամ մերժման որոշման կայացման ժամկետները Ապահովագրողի կողմից կարող են հետաձգվել, եթե ապահովագրական պատահարի հետ կապված փաստերը ճշգրտելու համար իրավական ակտերով սահմանված հիմքերով նշանակված է լրացուցիչ ստուգում/փորձաքննություն, հարուցված է քրեական գործ կամ դատական գործընթաց՝ մինչև նշված գործընթացների ավարտը կամ առկա են Կանոններով հատուցման վճարմանը խոչընդոտող այլ իրավիճակներ:

13"11" Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը, եթե պարզվել է, որ Պայմանագիրը կնքելիս կամ գործողության ընթացքում Ապահովադրի կողմից

Ապահովագրողին հայտնվել են Ապահովագրված անձի մասնագիտական ռիսկի կամ առողջական վիճակի մասին կեղծ տեղեկություններ կամ այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի, Ապահովադրի կամ Շահառուի կողմից իրականացվել են միտումնավոր գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն, ինչպես նաև օրենքով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

13"12" Ապահովագրողի կողմից հատուցման վճարման մերժման մասին որոշումը ծանուցվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին կամ Շահառուին)՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

13"13" Եթե Շահառուն հանդիսանում է անչափահաս, ապա նրան հասանելիք գումարը տրվում է նրա օրինական ներկայացուցիչներին:

13"14" Երկու և ավելի Շահառուների հատուցման գումարը հավասար ձևով բաժանվում է նրանց միջև, եթե Պայմանագրով կամ Շահառուների գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

13"15" Շահառուի մահվան դեպքում հատուցում ստանալու իրավունքը անցնում է Շահառուի ժառանգներին, եթե Ապահովադրի կողմից չի նշանակվում նոր Շահառու:

13"16" Ապահովադիրը (Շահառուն, Ապահովագրված անձը) երրորդ անձից վնասների հատուցում ստանալու դեպքում պարտավոր է անհապաղ Ապահովագրողին հայտնել այդ մասին:

13"16"1" եթե Ապահովադիրը (Շահառուն, Ապահովագրված անձը) տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ պայմանագրի հիման վրա կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից, ապա Ապահովագրողը մերժում կամ համապատասխան չափով նվազեցնում է ապահովագրական հատուցման վճարումը,

13"16"2" եթե ապահովագրական հատուցումը վճարելուց հետո պարզվում է, որ առկա են եղել կամ ի հայտ են եկել ապահովագրական հատուցումը մերժելու կամ համապատասխան չափով նվազեցնելու հիմքեր, ապա Ապահովագրողը վերանայում է հատուցման որոշումը՝ կայացնելով ապահովագրական հատուցումը մերժելու կամ մասնակի մերժելու մասին նոր որոշում, իսկ Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել իրեն վճարված կամ ավել վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

14"1" Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար:

14"2" Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական: Այն սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային կամ բացարձակ դրամական արտահայտությամբ:

14"3" Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական

հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

14"4" Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

15"1" Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա կամ Շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15"2" Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

15"3" Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի Ապահովագրված անձի կամ Շահառուի մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Շահառուից վերադարձնել ավել վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

16.1" Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

16.2" Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:

16.3" Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

17.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

17.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

17.3. Կետ 17.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

17.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

17.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 17"1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

18.1" Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

18.2" Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

18.3" Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«___» _____ 2025թ. թիվ ____ որոշմամբ

«ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ»

ԿՈԴ	ՎՆԱՍՎԱԾՔԻ ԲՆՈՒՅԹԸ	ՀԱՏՈՒՑԱՆ ՉԱՓ % ապահովա-գրական գումարի նկատմամբ
	ԳԼԽԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ S00 - S07	
1	Գլխի վնասվածքները, որոնց հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց վերահամադրում, բեկորների օստեոսինթեզ, գանգի տրեպանացիա, հոդաշապիկի և կապանային ապարատի, անոթների, նյարդերի վնասվածքների կապակցությամբ կատարվող վիրահատություններ, բացառությամբ կմախքային ձգում դնելը, առաջնային վիրաբուժական մշակումը, հեմատոմայի հեռացումը՝ մակերեսային վնասվածքների և գլխի բաց վերքերի ժամանակ, որոնց արժեքը ներառված է տվյալ փաստաթղթի համապատասխան կոդի ապահովագրական գումարում), անկախ վիրահատությունների քանակից, լրացուցիչ հատուցվում է.	10
S00	Գլխի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ ուղեկցվող ենթամաշկային արյունազեղումով և/կամ հեմատոմայով) Գլխի բաց վերք (գլխի մազածածկ մասի, դեմքի), այդ թվում և կծած վերք, որոնք պահանջում են վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5 7
S01	Դեմքի վնասվածքներ, որի արդյունքում առաջացել է՝ ա) վիրահատական միջամտություն պահանջող կոսմետիկ խանգարում բ) այլանդակում **Ծանոթություն.** Դեմքի պայմանական սահմաններն են՝ գլխի մազածածկ եզրը, ականջախեցու հիմքի առաջնային եզրը, ստորին ծնոտի ճյուղքի հետին եզրը, ստորին ծնոտի անկյունները և ստորին եզրերը:	 25 50
S02.0	Գանգաթաղի կոտրվածք ա) Գանգաթաղի ոսկրերի միայն արտաքին թիթեղի կոտրվածք	7 5
S02.1	Գանգի հիմի կոտրվածք	20
S02.2	Քթի ոսկրերի կոտրվածք	5
S02.3	Ակնակապճի հատակի կոտրվածք ա) գանգի խոռոչ թափանցող բ) գանգի խոռոչ չթափանցող	 10 5
S02.5	Ատամի կոտրվածք 2-3 ատամների կոտրվածք 4-6 ատամների կոտրվածք 7-10 ատամների կոտրվածք 11 և ավել ատամների կոտրվածք	2 4 6 8 10

S02.4	Այտոսկրի և վերին ծնոտի կոտրվածք	7
S02.6	Ստորին ծնոտի կոտրվածք	6
	Ծանոթություն. Եթե ալվեոլյար ելունի կոտրվածքի պատճառով ընկնում է ատամը, ապա դրա համար ապահովագրական գումար չի վճարվում: **Ծանոթություն.** Ատամի կորուստ (ատամի կոտրվածք կամ կորուստ) համարվում է պսակի ¼-ից ավելի կորուստը: Հեռացված կամ իմպլանտացված ատամը հավասար է կորստի: Կաթնատամների կոտրվածքի կամ կորստի դեպքում, մինչև 5 տարեկան, ապահովագրական գումարը վճարվում է ընդհանուր հիմունքներով:	
S03.0	Վնասվածքի հետևանքով առաջացած ծնոտի հոդախախտ	4
S03.1	Քթի աճառային միջնապատի հոդախախտ	3
S04	Գանգուղեղային նյարդերի վնասվածք	
S04.0	Տեսողական նյարդի կամ տեսողական հաղորդակցման ուղիների վնասվածք, որի հետևանքով առաջացել է՝ ա) մեկ աչքի ակոմոդացիդի կաթված բ) մեկ աչքի հեմիանոպսիա գ) մեկ աչքի տեսադաշտի ոչ կոնցենտրիկ նեղացում դ) մեկ աչքի տեսադաշտի կոնցենտրիկ նեղացում	 15 15 10 15
S04.1	Ակնաշարժ նյարդի վնասվածք	10
S04.2	Ճախարակային նյարդի վնասվածք	10
S04.3	Եռվորյակ նյարդի վնասվածք	10
S04.4	Զատիչ նյարդի վնասվածք	10
S04.5	Դիմային նյարդի վնասվածք	10
S04.6	Լսողական նյարդի վնասվածք, որի հետևանքով առաջացել է սենսոնևրալ ծանրալսություն՝ ա) 1-ին աստիճան բ) 2-րդ աստիճան գ) 3-րդ աստիճան դ) 4-րդ աստիճան (խլություն)	 7 10 15 20
S04.7	Հավելյալ նյարդի վնասվածք	10
S05	Աչքի և Ակնակապճի վնասվածք (ակնագնդի սալջարդ, ակնակապճի հյուսվածքի սալջարդ, եղջերաթաղանթի քերծվածքներ), որոնց հետևանքով առաջացել են՝ ա) պուլսացող էկզոֆթալմ բ) մեկ աչքի արցունքատար ուղիների ֆունկցիայի խանգարում գ) հեմոֆթալմ դ) կերատիտ ե) ակնաթաղանթի սպիներ, որոնք չեն առաջացնում տեսողության սրության իջեցում զ) ցանկացած տեսողություն ունեցող միակ աչքի տեսողության լրիվ կորուստ կամ ցանկացած տեսողություն ունեցող երկու աչքերի տեսողության լրիվ կորուստ է) մեկ աչքի տեսողության կորուստ կամ ակնագնդի կորուստ (որպես կոսմետիկական դեֆեկտ) ը) վնասվածքի հետևանքով տեսողություն չունեցող ակնագնդի հեռացում	 20 10 5 5 5 80 40 10
S05.0	Աչքի պատռված վերք՝ առանց ներակնային հյուսվածքի կորստի կամ քայքայման	5
S05.1	Աչքի պատռված վերք՝ ներակնային հյուսվածքի կորստով կամ քայքայումով	10
S05.2	Ակնակապճի թափանցող վերք՝ օտար մարմնի առկայությամբ կամ առանց դրա	10

	Աչքի և ակնակապճի վնասվածք, որոնց հետևանքով առաջանում են հետտրավմատիկ իրիդոցիկլիտ, խորիոռետինիտ, կոպի ոլորում, ծիածանաթաղանթի դեֆեկտ, բբի ձևափոխում	10
S06.0	Գլխուղեղի ցնցում, որին հաջորդել է ստացիոնար բուժում	5
S06.1	Գլխուղեղի սայջարդ (լոկալ և դիֆուզ)	10
S06.2	Վնասվածքային էպիդուրալ արյունազեղում	20
S06.3	Վնասվածքային սուբդուրալ արյունազեղում	20
S06.4	Վնասվածքային սուբարախնոիդալ արյունազեղում	10
S06.5	Ներգանգային վնասվածք՝ տևական կոմատոզ վիճակով ուղեկցվող (ապահովագրական գումարի վճարումը կատարվում է առանց այլ վնասվածքների հաշվառման)	25
S07	Դիմածնոտային հատվածի տրավմատիկ անդամահատում՝ ա) ծնոտի բացակայություն բ) ծնոտի բացակայություն (5 և ավելի ատամների տրավմատիկ ամպուտացիա գ) լեզվի բացակայություն դիստալ երրորդի մակարդակից (ծայրի) դ) լեզվի բացակայություն միջին երրորդի մակարդակից ե) լեզվի բացակայություն լեզվարմատի մակարդակով կամ լրիվ բացակայություն	 35 60 20 30 70
S07.0	Գլխի մազածածկ մակերեսի պոկում (գանգամաշկում), որի հետևանքով առաջացել են սպիներ	7
S07.1	Ականջի տրավմատիկ ամպուտացիա, որի հետևանքով առաջացել են՝ ա) սպիանան դեֆորմացիա կամ 1/3-ի բացակայություն բ) 1/3-ից մինչև 1/2-ի բացակայություն գ) լրիվ բացակայություն **Ծանոթություն.** Երկու ականջի խեցու վնասվածքի դեպքում ապահովագրական գումարները գումարվում են:	 7 16 25
S07.3	Թմբկաթաղանթի տրավմատիկ պատռվածք, առանց լսողության իջեցման ա) թմբկաթաղանթի տրավմատիկ պատռվածք, որն առաջ է բերել լսողության իջեցում (օտիտ)	7 12
	ՊԱՐԱՆՈՑԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ **S08 - S15**	
1	Պարանոցի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց վերահամադրում, բեկորների օստեոսինթեզ, լյամինէկտոմիա, վիրահատություններ կապսուլյար-կապանային ապարատի, անոթների, նյարդերի վնասվածքի կապակցությամբ, բացառություն են կազմում կմախքային ձգումը, առաջնային վիրաբուժական մշակումը, պարանոցի մակերեսային վնասվածքի և բաց վերքի դեպքում հեմատոմայի հեռացումը, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդի ապահովագրական գումարում) անկախ վիրահատությունների քանակից լրացուցիչ վճարվում է	10
S8	Պարանոցի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ հեմատոմայի, կապտուկի զարգացումով)	4
S9	Պարանոցի բաց վնասվածք, այդ թվում նաև կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	7
S10.0	Վերք, որն ընդգրկում է (վնասված է) կոկորդը և շնչափողը	13
S10.1	Վերք, որն ընդգրկում է (վնասված է) վահանաձև գեղձը	13
S10.2	Վերք, որն ընդգրկում է (վնասված է) ըմպանը և կերակրափողի պարանոցային հատվածը ա) որի հետևանքով առաջացել է կերակրափողի նեղացում	10 20

	բ) որի հետևանքով առաջացել է կերակրափողի անանցանելիություն, բայց ոչ շուտ քան վնասվածք ստանալուց 6 ամիս հետո (այդ ժամկետից վաղ ապահովագրական գումարը նախնական վճարվում է S 11.2-ի ա) կետով)	70
S11.0	Պարանոցային մեկ ողի կոտրվածք	20
S11.1	Պարանոցային ողների բազմակի կոտրվածք (2 և ավելի)	30
S11.2	Ենթալեզվային ոսկրի, կոկորդի աճառների կոտրվածք, որի պատճառով առաջացել է շնչառության կայուն խանգարում, ձայնի խռպոտություն կամ կորուստ տրախեոստոմիա	15 30
S12.0	Միջողնային կապանների և դիսկի վնասում պարանոցային մակարդակին	7
S12.1	Պարանոցային ողնի հոդախախտ և/կամ կապսուլյար-կապանային ապարատի պրկում պարանոցային մակարդակին	7
S13.0	Ողնուղեղի պարանոցային հատվածի սալջարդ, ճնշում համապատասխան նյարդաբանական սիմպտոմների զարգացումով ա) ողնուղեղի պարանոցային հատվածի մասնակի վնասում բ) ողնաշարի պարանոցային հատվածի ամբողջական հատում	10 40 80
S13.1	Ողնաշարի պարանոցային հատվածի նյարդարմատի վնասվածք	10
S13.2	Պարանոցային և բազկային հյուսակի վնասվածք ա) պլեքսիտ բ) հյուսակի մասնակի վնասում գ) հյուսակի ամբողջական հատում	 11 40 60
S14	Արյունատար անոթների վնասվածք պարանոցի մակարդակին ա) որի հետևանքով չի առաջացել սնուցման խանգարումներ բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S15	Մկանների և/կամ գլխի վնասվածք պարանոցի մակարդակին, որը պահանջում է վիրահատական միջամտություն	3
	ԿՐԾՔԱՎԱՆԴԱԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ S16 - S21	
	Կրծքավանդակի վնասվածք, որն առաջ է բերել վիրահատական միջամտություն (թորակոտոմիա, բեկորների օստեոսինթեզ, լյամինէկտոմիա, կապսուլյար կապանային ապարատի, անոթների, վնասվածքի հետևանքով կատարված վիրահատություններ, բացառությամբ կմախքային ձգում դնելը, առաջնային վիրաբուժական մշակումը և հեմատոմայի հեռացումը կրծքավանդակի մակերեսային վնասվածքների և բաց վերքերի, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերում) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
S16	Կրծքավանդակի վնասվածք (սալջարդ՝ կապտուկով, հեմատոմայով ուղեկցվող)	5
S17	Կրծքավանդակի բաց վնասվածք, այդ թվում նաև կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5
S17.0	Կրծքային ողի (մեկի) կոտրվածք	20
S17.1	Ողնաշարի կրծքային հատվածի բազմաթիվ (երկու և ավելի ողների) կոտրվածքներ	30
S17.2	Կրծոսկրի կոտրվածք	6
S17.3	Կողոսկրի կոտրվածք	3
S17.4	Կողոսկրի բազմաթիվ կոտրվածքներ (երկու և ավելի)	10
S17.5	Միջողնային դիսկի վնասում կրծքային հատվածում	6
S17.6	Կրծքային ողի հոդախախտ և/կամ կապսուլյար-կապանային ապարատի պրկում	6

S18	Նյարդերի և ողնուղեղի վնասվածք կրծքային հատվածում	
S18.0	Ողնուղեղի կրծքային հատվածի սալջարդ, ճնշում համապատասխան նևրոլոգիական ախտանիշների զարգացումով ա) ողնուղեղի կրծքային հատվածի մասնակի վնասում բ) ողնուղեղի կրծքային հատվածի ամբողջական հատում	10 40 80
S18.1	Ողնաշարի կրծքային հատվածի նյարդարմատի վնասվածք	10
S19	Կրծքային հատվածի արյունատար անոթների վնասվածք ա) որի հետևանքով չի առաջացել սնուցման խանգարումներ բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S20	Սրտի վնասվածք՝ կրծքավանդակի խոռոչի բաց վնասվածքով, նրա թաղանթների և խոշոր մագիստրալ անոթների վնասումով	25
S20.0	Սրտի վնասվածք (սալջարդ) ա) սրտապարկի արյունազեղումով (հեմոպերիկարդ) բ) առանց սրտապարկի արյունազեղման	 25 15
S20.1	Սրտի այլ վնասվածքներ (պտկաձև մկան, փականի վնասում)	15
S21.0	Վնասվածքային պնևմոթորաքս ա) միակողմանի բ) երկկողմանի	 5 8
S21.1	Վնասվածքային հեմոթորաքս ա) միակողմանի բ) երկկողմանի	 5 10
S21.2	Կրծքավանդակի խոռոչի այլ օրգանների վնասվածքներ, որոնց հետևանքով ա) դրվել է տրախեոստոմա բ) առաջացել է հետտրավմատիկ թոքաբորբ, հետտրավմատիկ էքսուդատիվ պլևրիտ (հիդրոթորաքս) մի կողմից երկու կողմից	20 7 10
	ՈՐՈՎԱՅՆԻ, ՄԵՋՔԻ ՍՏՈՐԻՆ ՄԱՍԻ, ՈՂՆԱՇԱՐԻ ԳՈՏԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ / ԿԱՄ ԿՈՆՔԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ **S22 - S28**	
	Որովայնի, ողնաշարի գոտկային հատվածի և/կամ կոնքի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (ռեպոզիցիա, բեկորների օսթեոսինթեզ, լյամինէկտոմիա, որովայնահատում, վիրահատություն կապսուլյար-կապանային ապարատի, անոթների, նյարդերի վնասման կապակցությամբ, բացառությամբ կմախքային ձգման, առաջնային վիրաբուժական մշակման և որովայնի, մեջքի ստորին հատվածի, ողնաշարի գոտկային հատվածի և կոնքի մակերեսային վնասվածքների և բաց վերքերի դեպքում հեմատոմայի հեռացման, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարում), անկախ վիրահատությունների թվից, լրացուցիչ վճարվում է	10
S22	Որովայնի, ողնաշարի գոտկային հատվածի և/կամ կոնքի վերք, այդ թվում և կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	6
S23	Որովայնի, ողնաշարի գոտկային հատվածի և/կամ կոնքի վնասվածք (արյունազեղման, հեմատոմայի զարգացմամբ ուղեկցվող սալջարդ)	4
S23.0	Գոտկային ողի (մեկ) կոտրվածք ա) գոտկային ողների բազմաթիվ կոտրվածքներ (երկու և ավելի)	12 20
S23.1	Սրբոսկրի կոտրվածք	10
S23.2	Պոչուկի կոտրվածք	7

S23.3	Զստոսկրի կոտրվածք ա) մարմնի բ) թևի	 10 7
S23.4	Քացախափոսի կոտրվածք	10
S23.5	Ցայլոսկրի (նստոսկրի) կոտրվածք	10
S23.7	Ողնաշարի գոտկասրբանային հատվածի և/կամ կոնքի ոսկրերի բազմաթիվ կոտրվածքներ	20
S23.8	Միջողային դիսկի վնասվածք գոտկասրբանային հատվածում	6
S23.9	Գոտկային ողի հոդախախտ և/կամ ողնաշարի գոտկային հատվածի և կոնքի կապսուլյար-կապանային ապարատի պրկում	6
S23.10	Սրբանազստային հոդի հոդախախտ ա) մեկ հոդի բ) երկու հոդի	 10 15
S23.11	Սրբանապոչուկային հոդի հոդախախտ	6
S23.12	Ցայլային սիմֆիզի վնասվածքային խզում	8
S24	Նյարդերի և ողնուղեղի գոտկային հատվածի վնասվածք՝ որովայնի, և կոնքի մակարդակին	
S24.0	Ողնուղեղի գոտկային հատվածի սալջարդ, ճնշում՝ համապատասխան նևրոլոգիական սիմպտոմատիկայի զարգացմամբ ա) ողնուղեղի գոտկային հատվածի մասնակի վնասում բ) ողնուղեղի գոտկային հատվածի ամբողջական հատում	10 40 90
S24.1	Ողնաշարի գոտկասրբանային հատվածի նյարդարմատների (նյարդային հյուսվածքների) վնասվածք	10
S25	Արյունատար անոթների վնասվածք՝ որովայնի, գոտկասրբանային հատվածի և/կամ կոնքի մակարդակին ա) որի հետևանքով չի առաջացել սնուցման խանգարումներ բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S25.0	Փայծաղի վնասվածք ա) որի հետևանքով չի հեռացվել փայծաղը բ) որի հետևանքով հեռացվել է փայծաղը (սպլենէկտոմիա)	 6 11
S25.1	Լյարդի և լեղապարկի վնասվածք ա) որի հետևանքով չի հեռացվել լեղապարկը և չի կատարվել լյարդի ռեզեկցիա բ) որի հետևանքով հեռացվել է լեղապարկը գ) որի հետևանքով կատարվել է լյարդի մասնազատում	 11 15 20
S25.2	Որովայնի այլ օրգանների վնասվածք բ) որի հետևանքով կատարվել է ստամոքսի և/կամ աղիների և/կամ ենթաստամոքսային գեղձի մի մասի հեռացում գ) ստամոքսի հեռացում դ) ենթաստամոքսային գեղձի հեռացում ե) ստամոքսի հեռացում, աղիքի կամ ենթաստամոքսային գեղձի մի մասի հեռացում	 15 20 30 30
S26.0	Երիկամների վնասվածք ա) երիկամի սալջարդ՝ մակրոհեմատուրիայի առկայությամբ, երիկամի վնասվածք, որի հետևանքով բ) կատարվել է երիկամի մասնազատում գ) երիկամի հեռացում դ) նեֆրոստոմայի (երիկամային խուղակ) տեղադրում ե) սուր երիկամային անբավարարություն	 5 20 35 30 25
S26.1	Միզածորանի վնասվածք	5
S26.2	Միզապարկի վնասվածք հեմատուրիայի զարգացումով ա) միզուկի նեղացում (ստրիկտուրա	5 20

	բ) միզուկի անանցանելիություն, որը պահանջում է ցիստոստոմի տեղադրում	25
S26.3	Միզուկի վնասվածք, դիզուրիայի, հեմատուրիայի զարգացումով, որն առաջ է բերել ա) միզուկի նեղացում (ստրիկտուրա) բ) միզուկի անանցանելիություն, որը պահանջում է ցիստոստոմի տեղադրում	 20 30
S26.4	Ձվարանի, արգանդափողի (ֆալոպյան) վնասվածք, որի հետևանքով ա) կատարվել է մեկ ձվարանի, փողի և ձվարանի հեռացում (կորուստ) բ) կատարվել է երկու ձվարանի կամ երկու փողի հեռացում	 15 25
S26.5	Արգանդի վնասվածք, որն առաջ է բերել ա) արգանդի կորուստ փողերի հետ միասին բ) արգանդի կորուստ մինչև 40 տարեկան կանանց մոտ գ) արգանդի կորուստ 40-50 տարեկան կանանց մոտ դ) արգանդի կորուստ 50 տարեկանից մեծ կանանց մոտ	 30 30 20 10
S27.0	Արտաքին սեռական օրգանների տրավմատիկ ամպուտացիա ա) առնանդամի մի մասի ամպուտացիա բ) մեկ ամորձու ամպուտացիա գ) առնանդամի ամբողջական ամպուտացիա դ) զույգ ամորձիների ամպուտացիա	 20 10 35 25
S28.0	Որովայնի, գոտկասբանային հատվածի և/կամ կոնքի մկանների և/կամ ջլերի վնասվածք, որը պահանջում է վիրահատական միջամտություն	3
S28.1	Որովայնի, գոտկասբանային հատվածի և/կամ կոնքի մկանների և/կամ ջլերի վնասվածքներ ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
	ՈՒՍԱԳՈՏՈՒ ԵՎ / ԿԱՄ ԲԱԶԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ S29 - S36	
	Ուսագոտու և/կամ բազկի վնասվածք, որն առաջ է բերել վիրահատական միջամտություն (բաց ռեպոզիցիա, բեկորների օսթեոսինթեզ, վիրահատություններ կապսուլյար-կապանային ապարատի, անոթների նյարդերի վնասման դեպքում, բացառությամբ կմախքային ձգում դնելուց, առաջնային վիրաբուժական մշակման և ուսագոտու և/կամ բազկի բաց վերքի և մակերեսային վնասվածքի դեպքում հեմատոմայի հեռացման, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
S29	Ուսագոտու և/կամ բազկի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ արյունազեղման և հեմատոմայի զարգացմամբ)	3
S30	Ուսագոտու և/կամ բազկի վերք, այդ թվում կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	4
S30.0	Անրակի կոտրվածք	6
S30.1	Թիակի կոտրվածք	5
S30.2	Բազկոսկրի կոտրվածք	7
S31.0	Բազկային հոդի հոդախախտ և/կամ բազկի կապսուլյար - կապանային ապարատի պրկում	5
S32.1	Ակրոմիալ-անրակային հոդի հոդախախտ	4
S33	Մաշկամկանային նյարդի վնասվածք, որի հետևանքով զարգացել է ա) վնասվածքային նևրիտ բ) նյարդի մասնակի վնասում գ) նյարդի ամբողջական հատում	 3 8 10

S34	Արյունատար անոթների վնասվածք ուսագոտու և/կամ բազկի մակարդակին ա) որի հետևանքով սնուցման խանգարումներ չի առաջացել բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S35	Մկանի և ջլի վնասվածք ուսագոտու և/կամ բազկի մակարդակին, որը պահանջում է վիրահատական միջամտություն	3
S35.0	Ուսագոտու և/կամ բազկի մի քանի մկանների և/կամ ջլերի վնասվածք. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
S36.0	Վերին վերջույթի վնասվածքային ամպուտացիա բազկային հոդի մակարդակից	60
S36.1	Վերին վերջույթի վնասվածքային ամպուտացիա բազկոսկրի մակարդակից	40
	ԱՐՄՆԿԱՅԻՆ ՀՈԴԻ ՇՐՋԱՆԻ ԵՎ/ԿԱՄ ՆԱԽԱԲԱԶԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ **S37 - S44**	
	Արմնկային հոդի և/կամ նախաբազկի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզցիա, բեկորների օստեոսինթեզ, կապսուլյար -կապանային ապարատի, անոթների, նյարդերի վիրահատություն պահանջող վնասվածքներ, բացառությամբ կմախքային ձգման,առաջնային վիրաբուժական մշակման և արմնկի ու նախաբազկի բաց վերքի և մակերեսային վնասվածքի դեպքում հեմատոմայի հեռացման, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
S37	Արմնկային հոդի շրջանի և/կամ նախաբազկի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ արյունազեղման և հեմատոմայի զարգացմամբ)	3
S38	Արմնկային հոդի շրջանի և/կամ նախաբազկի վերք, այդ թվում նաև կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5
S39.0	Ծղիկոսկրի կոտրվածք	4
S39.1	Ճաճանչոսկրի կոտրվածք	4
S40.0	Ճաճանչոսկրի գլխիկի հոդախախտ(բացառությամբ սովորույթայինի) և/կամ կապսուլյար-կապանային ապարատի պրկում	5
S40.2	Կոլլատերալ կապանի (կապանների) վնասվածքային պատռվածք	5
S41	Նյարդի վնասվածք արմնկի և/կամ նախաբազկի մակարդակին	
S42	Արյունատար անոթների վնասվածք արմնկի և/կամ նախաբազկի մակարդակին ա) որի հետևանքով չի առաջացել սնուցման խանգարումներ բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S43	Մկանի և/կամ ջլի վնասվածք նախաբազկի շրջանում, որը պահանջում է վիրահատական միջամտություն	2
S43.0	Մի քանի մկանների և/կամ ջլերի վնասվածք, արմնկի և/կամ նախաբազկի շրջանում - ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	25
S44.0	Նախաբազկի վնասվածքային ամպուտացիա արմնկահոդի մակարդակին	60
S44.1	Նախաբազկի վնասվածքային ամպուտացիա արմնկային և ճաճանչ-դաստակային հոդերի միջև	40
	ՆԱԽԱԴԱՍՏԱԿԻ ԵՎ/ԿԱՄ ԴԱՍՏԱԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ **S45 - S52**	

	Նախադաստակի և դաստակի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզցիա, բեկորների օստեոսինթեզ, կապսուլյար - կապանային ապարատի, անոթների, նյարդերի վիրահատություն պահանջող վնասվածքներ, բացառությամբ կմախքային ձգումը,առաջնային վիրաբուժական մշակումը, նախադաստակի և դաստակի բաց վերքերը և մակերեսային վնասվածքի դեպքում հեմատոմայի հեռացումը, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
S45	Նախադաստակի և/կամ դաստակի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ արյունազեղման և հեմատոմայի զարգացմամբ)	3
S46	Նախադաստակի և/կամ դաստակի վերք, այդ թվում նաև կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5
S47.0	Նախադաստակի և/կամ դաստակի ոսկրի կոտրվածք	4
S47.1	Նախադաստակի և դաստակի բազմաթիվ կոտրվածքներ. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
S47.2	Ձեռնաթաթի մատի կոտրվածք Ձեռնաթաթի մատի կոտրվածք, որը բերում է շարժումների բացակայության ա) մեկ հոդում բ) երկու հոդում	5 10 15
S47.3	Մատների բազմաթիվ կոտրվածքներ. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
S48	Նախադաստակի և ձեռնաթաթի մակարդակին կապսուլյար - կապանային ապարատի պրկում, հոդախախտ և վնասում	
S48.0	Նախադաստակի հոդախախտ	4
S48.1	Ձեռնաթաթի մատի հոդախախտ և/կամ կապսուլյար - կապանային ապարատի պրկում նախադաստակի և ձեռնաթաթի մակարդակին	4
S48.2	Ձեռնաթաթի մատների բազմաթիվ հոդախախտեր. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	8
S49	Նյարդի վնասվածք նախադաստակի և ձեռնաթաթի մակարդակին, որի հետևանքով զարգացել է. ա) վնասվածքային նևրիտ բ) նյարդի մասնակի վնասում գ) նյարդի ամբողջական վնասում	 3 5 8
S50	Արյունատար անոթների վնասվածք նախադաստակի և/կամ ձեռնաթաթի մակարդակին. ա) որի հետևանքով չի առաջացել սնուցման խանգարումներ բ) որի հետևանքով առաջացել է սնուցման խանգարումներ	 3 8
S51	Մկանի և ջլի վնասվածք նախադաստակի և/կամ ձեռնաթաթի մակարդակին, որը պահանջում է վիրահատական միջամտություն	2
S52	Նախադաստակի և/կամ դաստակի տրավմատիկ ամպուտացիա	50
S52.0	Ձեռնաթաթի մեծ մատի տրավմատիկ ամպուտացիա լրիվ/մասնակի	15/8
S52.1	Ձեռնաթաթի այլ որևէ մեկ մատի տրավմատիկ ամպուտացիա լրիվ/մասնակի	10/5
S52.2	Ձեռնաթաթի երկու և ավելի մատների տրավմատիկ ամպուտացիա լրիվ/մասնակի	20/10
	ԿՈՆՔԱԶԴՐԱՅԻՆ ԵՆ ԿԱՄ ԱԶԴՐԻ ՇՐՋԱՆԻ ՎՆԱՍՎԱԾՔ S53 - S59	
	Կոնքազդրային հոդի և/կամ ազդրի շրջանի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզիցիա, բեկորների օստեոսինթեզ, կապսուլյար - կապանային	10

	ապարատի, անոթների, նյարդերի վիրահատություն պահանջող վնասվածքներ, բացառությամբ կմախքային ձգումը, առաջնային վիրաբուժական մշակումը և կոնքազդրային հոդի և ազդրի բաց վերքերը և մակերեսային վնասվածքի դեպքում հեմատոմայի հեռացումը, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	
S53	Կոնքազդրային հոդի և/կամ ազդրի շրջանի մակերեսային վնասվածք (սալջարդ՝ արյունազեղման և հեմատոմային զարգացմամբ)	3
S54	Կոնքազդրային հոդի և/կամ ազդրի շրջանի վերք, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	4
S55.0	Ազդոսկրի կոտրվածք	10
S55.1	Ազդրի հոդախախտ և/կամ կոնքազդրային հոդի և ազդրի կապսուլյար կապանային ապարատի պրկում	7
S56	Նյարդերի վնասվածք կոնքազդրային հոդի և/կամ ազդրի մակարդակին, որի հետևանքով առաջացել է. ա) վնասվածքային նևրիտ բ) նյարդի մասնակի խզում գ) նյարդի լրիվ խզում	 10 20 30
S57	Արյունատար անոթների վնասվածք կոնքազդրային հոդի և/կամ ազդրի մակարդակին, ա) որի հետևանքով չի առաջացել անոթային անբավարարություն բ) որի հետևանքով առաջացել է անոթային անբավարարություն	 10 30
S58	Մկանի և/կամ ջլի վնասվածք կոնքազդրային հոդի և/կամ ազդրի շրջանում, որը պահանջում է վիրահատական միջամտություն	2
S58.0	Մի քանի մկանների և/կամ ջլերի վնասվածք կոնքազդրային հոդի և/կամ ազդրի շրջանում, որը պահանջում է վիրահատական միջամտություն. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	25
S59	Կոնքազդրային հոդի և/ կամ ազդրի շրջանի տրավմատիկ ամպուտացիա ա) միակ վերջույթի կոնքազդրային հոդի շրջանի և/կամ ազդրի տրավմատիկ ամպուտացիա	60
	ԾՆԿԱՆ ԵՎ / ԿԱՄ ՍՐՈՒՆՔԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ **S60 - S67**	
	Ծնկան և/կամ սրունքի վնասվածք, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզիցիա, բեկորների օստեոսինթեզ, կապսուլյար - կապանային ապարատի վիրահատություն պահանջող վնասվածքներ, բացառությամբ կմախքային ձգումը, առաջնային վիրաբուժական մշակումը, ծնկան և սրունքի բաց վերքերը և մակերեսային վնասվածքի դեպքում հեմատոմայի հեռացումը, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական գումարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
	Ծնկան և/կամ սրունքի մակերեսային վնասվածք, (սալջարդ՝ արյունազեղման և հեմատոմայի զարգացմամբ)	3
S60	Ծնկան և/կամ սրունքի բաց վերք, այդ թվում նաև կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5
S61.0	Ծնկոսկրի կոտրվածք	5
S61.1	Մեծ ոլոքի կոտրվածք	6
S61.2	Միայն նրբոլոքի կոտրվածք	5

S61.3	Պճեղի կոտրվածք	5
S62.0	Ծնկոսկրի հոդախախտ (բացառությամբ սովորույթայինի) և/կամ ծնկան և սրունքի կապսուլյար-կապանային ապարատի պրկում	1
S62.1	Ծնկահոդի հոդախախտ	5
S62.2	Մենիսկի պատռվածք (թարմ)	3
S62.3	Ծնկահոդի կողմնային կապանի (դրսային և/կամ ներսային) պրկում և/կամ պատռվածք	3
S62.4	Ծնկահոդի խաչաձև կապանի (հետին և/կամ առաջնային) պրկում և/կամ պատռվածք	3
S62.5	Ծնկահոդի մի քանի կառուցվածքների վնասվածքների դեպքում ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	15
S63	Նյարդերի վնասվածք ծնկան և /կամ սրունքի մակարդակին, որի հետևանքով զարգացել է ա) նևրիտ բ) նյարդի մասնակի վնասում գ) նյարդի ամբողջական հատում	 4 15 25
S64.0	Մի քանի նյարդերի վնասում ծնկան և/կամ սրունքի մակարդակին ապահովագրական վճարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	40
S65	Արյունատար անոթների վնասում ծնկան և/կամ սրունքի մակարդակին, որի հետևանքով ա) չի առաջացել անոթային անբավարարություն բ) առաջացել է անոթային անբավարարություն	 10 30
S66	Ծնկան և/կամ սրունքի վիրահատական միջամտություն պահանջող մկանների և/կամ ջլերի վնասվածք	2
S66.0	Աքիլլեսյան ջլի վնասվածք	5
S66.1	Ծնկան և/կամ սրունքի մի քանի մկանների և ջլերի վիրահատություն պահանջող վնասվածք. ապահովագրական վճարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
S67	Սրունքի վնասվածքային ամպուտացիա ա) միակ սրունքի վնասվածքային ամպուտացիա	30 50
S67.0	Վնասվածքային ամպուտացիա ծնկահոդի մակարդակից	50
	ՍՐՈՒՆՔ-ԹԱԹԱՅԻՆ ՀՈԴԻ ԵՎ / ԿԱՄ ՈՏՆԱԹԱԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ S68 - S75	
	Սրունք-թաթային հոդի և/կամ թաթի շրջանի վնասվածքներ, որոնց հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզիցիա, ոսկրաբեկորների օսթեոսինթեզ, վիրահատություններ կապսուլյար-կապանային ապարատի, անոթների նյարդերի վնասման դեպքում, բացառությամբ կմախքային ձգում դնելը, առաջնային վիրաբուժական մշակման և սրունք -թաթային հոդի և թաթի բաց վերքի և մակերեսային վնասվածքների դեպքում հեմատոմայի հեռացման, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական վճարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
S68	Սրունք-թաթային հոդի և/կամ թաթի մակերեսային վնասվածք (սայջարդ՝ արյունազեղման և հեմատոմայի զարգացմամբ)	3
S69	Սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի վերք, այդ թվում և կծած, որը պահանջում է վիրաբուժական միջամտություններ (վերքի կարում)	5
S70.0	Կրունկոսկրի կոտրվածք	7
S70.1	Վեգոսկրի կոտրվածք	5
S70.2	Ոտնաթաթի տարզալ և մետատարզալ ոսկրերի կոտրվածք	5
S70.3	Ոտնաթաթի մեծ մատի կոտրվածք	3

S70.4	Ոտնաթաթի այլ մատի կոտրվածք	2
S70.5	Ոտնաթաթի մատների բազմաթիվ կոտրվածքներ ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	15
S71.0	Սրունք-թաթային հոդի հոդախախտ և/կամ սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի կապսուլյար-կապանային ապարատի պրկում	3
S72	Նյարդի վնասվածք սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի մակարդակին, որի հետևանքով զարգացել է ա) վնասվածքային նևրիտ բ) նյարդի մասնակի վնասում գ) նյարդի ամբողջական հատում	 3 12 25
S72.0	Մի քանի նյարդերի վնասվածք սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի մակարդակին. ապահովագրական գումարները գումար-վում են, բայց ոչ ավել, քան	25
S73	Արյունատար անոթների վնասվածք սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի մակարդակին, որի հետևանքով ա) չի առաջացել սնուցման խանգարումներ բ) առաջացել է սնուցման խանգարումներ	 10 30
S74	Մկանի և/կամ ջլի վնասվածք սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի մակարդակին, որը պահանջում է վիրահատական միջամտություն	2
S74.0	Մի քանի մկանների և/կամ ջլերի վնասվածք սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի մակարդակին, որը պահանջում է վիրահատական միջամտություն. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	15
S75.0	Ոտնաթաթի վնասվածքային ամպուտացիա սրունք-թաթային հոդի մակարդակին	30
S75.1	Ոտնաթաթի մեկ մատի վնասվածքային ամպուտացիա ա) մեկ մատի լրիվ /մասնակի բ) թաթի այլ մատի լրիվ / մասնակի	 7/5 4/2
S75.2	Ոտնաթաթի երկու և ավելի մատների վնասվածքային ամպուտացիա. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	12
S75.3	Թաթի այլ մասերի վնասվածքային ամպուտացիա ա) ոտնաթաթ-ֆալանգային մակարդակին (բոլոր մատների բացակայություն) բ) ոտնաթաթի մետատարզալ ոսկրերի մակարդակին գ) ոտնաթաթի տարզալ ոսկրերի մակարդակին	 15 25 30
	ՄԱՐՄՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՆ ԸՆԴԳՐԿՈՂ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ T00 - T05	
	Մարմնի մի քանի հատվածներ ընդգրկող վնասվածքներ, որոնց հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (բաց ռեպոզիցիա,բեկորների օսթեոսինթեզ, վիրահատություններ կապսուլյար-կապանային ապարատի, անոթների նյարդերի վնասման դեպքում, բացառությամբ կմախքային ձգում դնելը, առաջնային վիրաբուժական մշակման և մարմնի մի քանի շրջաններն ընդգրկող բաց վերքի և մակերեսային վնասվածքների դեպքում հեմատոմայի հեռացման, որոնց արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդերի ապահովագրական վճարի արժեքի մեջ) անկախ վիրահատությունների թվից լրացուցիչ վճարվում է	10
T00	Մակերեսային վնասվածքներ (սալջարդ՝ արյունազեղմամբ և հեմատոմայով ուղեկցվող), որոնք ընդգրկում են մարմնի մի շարք շրջաններ. ավելի, քան 21օրվա բուժման դեպքում ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	12

T01	Մարմնի մի շարք շրջաններ ընդգրկող վերքեր, այդ թվում և կծած, որոնք պահանջում են դնել վիրաբուժական կար. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	20
T02	Մարմնի մի շարք շրջաններ ընդգրկող կոտրվածքի դեպքում ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	40
T03	Մարմնի մի շարք շրջաններ ընդգրկող հոդախախտեր և/կամ կապսուլյար-կապանային ապարատի պրկումներ. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել քան	25
T04	Մարմնի մի շարք շրջաններ ընդգրկող վնասվածքային ամպուտացիաներ. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	80
T05.0	Նյարդերի վնասվածքներ մարմնի մի շարք շրջանների ընդգրկումով. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	40
T05.1	Մարմնի մի շարք շրջանների արյունատար անոթների վնասվածքներ. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել քան	30
T05.2	Մարմնի մի շարք շրջանների և/կամ ջլերի վիրահատական միջամտություն պահանջող վնասվածքներ-ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավել, քան	25
	ԲՆԱԿԱՆ ԱՆՑՔԵՐՈՎ ՕՏԱՐ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ T06 - T07	
T06	Բնական անցքերով օտար մարմինների ներթափանցում, որի հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն (լապարատոմիա, թորակոտոմիա, տրախեստոմիա, ցիստոտոմիա, վիրահատական միջամտություն ոսկրածոցերի վրա) անկախ վիրահատությունների քանակից լրացուցիչ վճարվում է	10
T07	Բնական անցքերով օտար մարմինների ներթափանցում, որի հետևանքով կատարվել է բրոնխոսկոպիա, գաստրոսկոպիա, ցիստոսկոպիա, հիստերոսկոպիա, լապարասկոպիա, անկախ մանիպուլյացիաների թվից, լրացուցիչ վճարվում է	5
	ՋԵՐՄԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐ T08 - T17	
1	Ջերմային և քիմիական 2-րդ և 3-րդ աստիճանի այրվածքներ, որոնց հետևանքով կատարվել է վիրահատություն՝ այրվածքային մակերեսը փակելու նպատակով, դրվել է տրախեոստոմ (բացառությամբ առաջնային վիրաբուժական միջամտության, որի արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդի ապահովագրական գումարի մեջ) անկախ վիրահատությունների քանակից լրացուցիչ վճարվում է	10
	ՄԱՐՄՆԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԻՐԵՆՑ ՏԵՂԱԿԱՅՈՒՄՈՎ ՃՇՏՎԱԾ ՋԵՐՄԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐ T08 - T12	
T08	Դեմքի ջերմային և քիմիական 2-րդ և 3-րդ աստիճանի այրվածքներ, որոնց հետևանքով առաջացել է. ա) վիրահատական միջամտություն պահանջող կոսմետիկ խանգարում բ) այլանդակում գ) այրվածքային հիվանդություն (վճարումները կատարվում են առանց այրվածքի մակերեսն ու խորությունը հաշվի առնելու)	 25 50 50
T09.0	Գլխի և/կամ պարանոցի ջերմային (քիմիական) այրվածք.	
T09/1	Գլխի և/կամ պարանոցի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 1%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6%	 5 8

	գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	15 25
T10/1	Գլխի և/կամ պարանոցի 3-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 0.5%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 10 20 30 45
T10/2	Իրանի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 1%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 5 8 15 25
T10/3	Իրանի 3-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 0.5%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 10 20 30 45
T10/4	Ուսագոտու և/կամ վերին վերջույթի, բացառությամբ նախադաստակի և ձեռնաթաթի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 1%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 7 12 20 30
T10/5	Ուսագոտու և/կամ վերին վերջույթի, բացառությամբ նախադաստակի և ձեռնաթաթի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 0.5%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 10 20 30 45
T11/0	Նախադաստակի և/կամ ձեռնաթաթի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք.	7
T11/1	Նախադաստակի և/կամ 3-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք.	10
T12/0	Կոնքազդրային հոդի և/կամ ստորին վերջույթի շրջանի, բացառությամբ սրունք-թաթային հոդի և ոտնաթաթի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 1%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 7 12 20 30
T12/1	Կոնքազդրային հոդի և/կամ ստորին վերջույթի շրջանի, բացառությամբ սրունք-թաթային հոդի և ոտնաթաթի 3-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) Մարմնի մակերեսի 0.5%-4% բ) Մարմնի մակերեսի 4%-6% գ) Մարմնի մակերեսի 6%-8% դ) Մարմնի մակերեսի 8%-ից ավելի	 10 20 30 45
T12/2	Սրունք-թաթային հոդի և/կամ ոտնաթաթի 2-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք.	7
T12/3	Սրունք-թաթային հոդի և ոտնաթաթի 3-րդ աստիճանի ջերմային (քիմիական) այրվածք.	10

	ԱՉՔԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՋԵՐՄԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐ **T13 - T15**	
	1.Աչքի և/ կամ ներքին օրգանների 2-3-րդ աստիճանի ջերմային և քիմիական այրվածքներ, որոնց հետևանքով կատարվել է վիրահատական միջամտություն, բացառությամբ առաջնային վիրաբուժական մշաման, դիագնոստիկ միջոցառումներ անկախ վիրահատությունների քանակից լրացուցիչ վճարվում է	10
T13	Աչքի և/կամ դրա հավելյար ապարատի 2-րդ և ավելի աստիճանի ջերմային և քիմիական այրվածք, որի հետևանքով առաջացել է բ) մեկ աչքի ակոմոդացիայի կաթված գ) մեկ աչքի հեմիանոպսիա դ) տեսադաշտի ոչ կոնցենտրիկ նեղացում ե) տեսադաշտի կոնցենտրիկ նեղացում զ) կոպի պտտում, ծիածանաթաղանթի դեֆեկտ, ոսպնյակի տեղաշարժ, բբի ձևափոխություն է) եղջերաթաղանթի էռոզիա, ակնաթաղանթների սպիեր, որոնք չեն առաջացրել տեսողության սրության իջեցում ը) տեսողության սրության իջեցում (տես հատուկ աղյուսակը)	 15 15 10 15 10 5
T13.0	Կոպի և/կամ հարակնային շրջանի ջերմային (քիմիական) այրվածք	5
T13.1	Եղջրաթաղանթի և/կամ կոնյուկտիվային պարկի ջերմային (քիմիական) այրվածք ա) որի հետևանքով առաջացել է արցունքատար ուղիների ֆունկցիայի (մեկ աչքի) խանգարում	10 20
T13.2	Ջերմային այրվածք, որը բերել է ակնագնդի խզման և քայքայման ա) որի հետևանքով առաջացել է ցանկացած տեսողություն ունեցող միակ աչքի կամ ցանկացած տեսողություն ունեցող երկու աչքերի տեսողության լրիվ կորստ բ) որի հետևանքով հեռացվել է տեսողությունից զուրկ ակնագունդը	40 80 10
T14	Շնչառական ուղիների ջերմային (քիմիական) այրվածք, որն առաջ է բերել շնչառության կայուն խանգարում, ձայնի խռպոտություն կամ կորուստ, տրախեոստոմիկ խողովակի կրում	30
T14.0	Կոկորդի և շնչափողի ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 7 15 30
T14.1	Կոկորդի, շնչափողի և թոքի ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 10 20 40
T15	1. Երկու ներքին օրգանների ջերմային (քիմիական) այրվածք, որի հետևանքով առաջացել է խոլեցիստիտ, դուոդենիտ, պանկրեատիտ, կոլիտ, պրոկտիտ, պարապրոկտիտ 2. Այլ ներքին օրգանների ջերմային (քիմիական) այրվածքներ, որոնց հետևանքով առաջացել է ա) սուր լյարդային և/կամ երիկամային անբավարարություն և/կամ բազմաօրգանային անբավարարություն. ապահովագրական վճարումները կատարվում են առանց կոնկրետ օրգանի վնասվածքի աստիճանը լրացուցիչ հաշվի առնելու բ) սեռական օրգանի սպիական փոփոխություններ, որոնք առաջացնում են արտահայտված ֆունկցիոնալ խանգարումներ գ) խուղակի ախտաբանական առաջացումը կամ արհեստական խուղակի դնումը (կոլոստոմներ, եյուստոմներ, ցիստոստոմաներ,	20 40 40 50

	գաստրոստոմաներ) անկախ վիրահատական միջամտությունների քանակից, ապահովագրական վճարումները իրականացվում են առանց կոնկրետ օրգանի ախտահարման աստիճանը լրացուցիչ հաշվի առնելու	
T15.0	Բերանի և ըմպանի ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 3 8 15
T15.1	Կերակրափողի ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 7 15 25
T15.2	Մարսողական ուղու այլ հատվածների (կերակրափողից ներքև) ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 7 15 30
T15.3	Ներքին միզասեռական օրգանների ջերմային (քիմիական) այրվածք. ա) 1-ին աստիճանի բ) 2-րդ աստիճանի գ) 3-րդ աստիճանի	 7 15 30
	ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ **T16 - T17**	
	Խորը ցրտահարություն (հյուսվածքների մեռուկով), որը պահանջում է վիրահատական միջամտություն՝ դեֆեկտը ծածկելու նպատակով, բացառությամբ առաջնային վիրաբուժական միջամտության, որի արժեքը ներառված է սույն փաստաթղթի համապատասխան կոդի ապահովագրական վճարի գումարի մեջ) անկախ վիրահատական միջամտությունների քանակից լրացուցիչ վճարվում է	10
T16.0	Գլխի ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 3 7 10 15
T16.1	Պարանոցի մակերեսային ցրտահարություն մարմնի մակերեսի 1% և ավելին	4
T16.2	Կրծքավանդակի ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 4 8 10 15
T16.3	Որովայնապատի, մեջքի ստորին հատվածի և/կամ կոնքի ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 5 9 12 16
T16.4	Ձեռքի (առանց նախադաստակի և ձեռնաթաթի) ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 4 8 10 14
T16.5	Նախադաստակի և/կամ ձեռնաթաթի ցրտահարություն	3

T16.6	Կոնք-ազդրային շրջանի և ազդրի մակերեսային ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 5 8 12 16
T16.7	Ծնկան և/կամ սրունքի ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 1-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 4 8 12 16
T16.8	Սրունք-թաթային հոդի և ոտնաթաթի ցրտահարություն	5
T17.0	Գլխի (դեմքի) շրջանի խոր ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզով, որի հետևանքով առաջացել է ա) վիրահատական միջամտություն պահանջող կոսմետիկ խանգարումներ բ) այլանդակում **Ծանոթություն.** Դեմքի պայմանական սահմաններ են համարվում գլխի մազածածկի եզրը, ականջախեցու հիմքի առաջնային եզրը, ստորին ծնոտի ճյուղերի հետին եզրը, ստորին ծնոտի անկյունը և ստորին եզրը: T34.0 ա) և բ) կետերի ապահովագրական վճարումներն իրականացվում են առանց ցրտահարության մակերեսի լրացուցիչ հաշվառման	 25 50
T17.1	Պարանոցի հյուսվածքների նեկրոզով ուղեկցվող խորը ցրտահարություն, մարմնի մակերեսի 0.5% և ավելին	7
T17.2	Կրծքավանդակի նեկրոզով ուղեկցվող խորը ցրտահարություն ա) մարմնի մակերեսի 0,5-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 7 10 14 18
T17.3	Որովայնապատի, մեջքի ստորին հատվածի և/կամ կոնքի մակերեսային ցրտահարություն՝ նեկրոզի առաջացումով ա) մարմնի մակերեսի 0.5-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 7 10 14 18
T17.4	Ձեռքի (առանց նախադաստակի և ձեռնաթաթի) մակերեսային ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզով ուղեկցվող ա) մարմնի մակերեսի 0.5-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 7 10 14 18
T17.5	Նախադաստակի և/կամ ձեռնաթաթի խորը ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզի առաջացումով	7
T17.6	Կոնք-ազդրային շրջանի և/կամ ազդրի խորը ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզի առաջացումով ա) մարմնի մակերեսի 0.5-4% բ) մարմնի մակերեսի 4-6% գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	 7 10 14 18
T17.7	Ծնկան շրջանի և սրունքի խորը ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզի առաջացումով ա) մարմնի մակերեսի 0.5-4% բ) մարմնի մակերեսի 4-6%	 7 10

	գ) մարմնի մակերեսի 6-8% դ) մարմնի մակերեսի ավելի քան 8%	14 18
T17.8	Սրունք-թաթային հոդի շրջանի և ոտնաթաթի խորը ցրտահարություն՝ հյուսվածքների նեկրոզի առաջացումով	7
T17.	Մարմնի մի քանի շրջաններ ընդգրկող խորը ցրտահարություն՝ հյուսվածքների մեռուկացումով. ապահովագրական գումարները գումարվում են, բայց ոչ ավելի քան	35
	ԴԵՂՈՐԱՅՔՆԵՐՈՎ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ **T18**	
T18	Սուր պատահական թունավորումներ, որոնք առաջացել են թունավոր կենդանիների կծելուց կամ նրանց հետ կոնտակտի մեջ մտնելու պատճառով, որոնք պահանջում են ստացիոնար բուժում	9
	ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ **(T19 - T78)**	
T19.0	Շանթահարություն, որը պահանջում է ստացիոնար բուժում	8
T19.1	Էլեկտրահարություն, որը պահանջում է ստացիոնար բուժում	8
	ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ **A1-A2** **Ծանոթություն.** Կանխարգելիչ պատվաստման դեպքում ապահովագրական վճարումներ չեն կատարվում	
A1	Կատաղություն	70
A2	Տզային էնցեֆալիտ	30